ԱՎԱՆԴՈՒՅԹ

# ՀԱՎԱՍՈՒ ՏՈՆԸ ՆՇԱՆԱՎՈՐՎԵՑ ԳՈՒՍԱՆԻ ԿԻՍԱՆԴՐՈՒ ԲԱՑՄԱՄԲ

*Վրաստանի Ծալկայի մունիցիպալիտետի Այազմա գյուղը կրկին ցնծում ու թնդում էր, կրկին առիթ ուներ գյուղ ժամանած բազմաթիվ հյուրերի հետ հպարտանալ իր զավակով, եւս մեկ անգամ գլուխ խոնարհել գուսան Հավասու (Արմենակ Մարկոսյան) ու նրա արվեստի առաջ:*

1991 թվականից այազմացիների համար տոն դարձած այս օրը աստիճանաբար է'լ ավելի զանգվածային ու խորհրդաշատ է դառնում: Ահավասիկ, այս տարի այն նշանավորվեց Այազմայի հարեւան՝ Ղզլքիլիսա գյուղի ծնունդ, այժմ մոսկվայաբնակ բարերար, խոշոր շինարարական ընկերության նախագահի Էդգար Արամյանի






բարի ու շնորհակալ գործով: Հենց նրա ծախսերով, օրը պատմական դարձավ Հավասու կիսանդրու, ասել է թե՝ փոքրիկ հուշահամալիր-պուրակի բացմամբ: Որովհետեւ կիսանդրու կողքին բխացող ցայտաղբյուրն ու բազալտապատ հատվածը է'լ ավելի խոսուն դարձրեցին հիրավի գեղեցիկ հուշակոթողը: Իսկ գործարարի որդուն՝ փոքրիկ Տիգրանիկին վերապահված ժապավենը կտրելու պատասխանատվությունը, ասես, պատգամ դարձավ առ այն, որ սերունդները հիշեն պիտի իրենց Մեծերին ու հավերժորեն մեծարեն:

Գուսան Հավասուն նվիրված ավանդակա միջոցառմանը ելույթ ունեցան Էդգար Արամյանը, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Կախա Օքրիաշվիլին, Հենզել Մկոյանը, Ծալկայի մունիցիպալիտետի նախագահ Իլիա Սաբաձեն, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության նախագահ Ժորա Սնխչյանը, «Հայարտուն» կրթամշակութային կենտրոնի ղեկավար Լեւոն Չիդիլյանը, ինչպես նաեւ՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Շիրակ Թորոսյանը: Ելույթ ունեցողներից յուրաքանչյուրը Հավասուն էր գովերգում՝ օրն էր իրենը: Փորձում էր նոր պատմություններ մեջբերել նրա կյանքից ու նաեւ իր գնահատանքն էր տալիս կիսանդրու բացմանն աջակից բոլորին: Իսկ բարերար Էդգար Արամյանն իր խոսքում համեստորեն նշում էր, որ ինքը պարզապես աջակցել ու իրականացրել էր իր եւ հայրենակիցների վաղեմի ցանկությունը ու դրանով խոնարհումը բերել Գուսանին եւ այժմ փորձում էր պարզապես վայելել օրվա ուրախությունը, երջանիկ լինել մարդկանց ժպիտներով, երգել ու պարել նրանց հետ: Արժեւորելով գյուղն այսուհետ զարդարող հուշակոթողի գոյությունը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանն իր ելույթում ընդգծեց նաեւ Հավասու տուն-թանգարանի բացման կարեւորությունը, լիահույս լինելով, որ դա կիրականացվի մոտ ապագայում:

Ժողովրդական տոնախմբությունը համախմբել էր ոչ միայն այազմացիներից յուրաքանչյուրին, այլեւ հարեւան գյուղերի բնակիչներին, ովքեր ամեն տարի իրենց ներկայությամբ փորձում են պատվել կույր աչքով, բայց սուր մտքով 2000 երգի, 1500 քառյակի եւ բազմաթիվ մեղեդիների հեղինակին՝ գուսան Հավասուն: Այդուհանդերձ, բոլորն էլ խոստովանում էին, որ տարին իսկապես տարբերվեց մյուսներից: Տեղի դպրոցի վաստակաշատ մանկավարժ Վարսիկ Ղուլիկյանի խոստովանմամբ, կիսանդրու տեղադրմամբ ասես Հավասու վերադարձը զգաց, նրա կենդանի ներկայությունը տեսավ եւ առավել հպարտացավ նման հայրենակից ունենալու իր առավելությամբ:

Միջոցառման պաշտոնական մասին հաջորդեց գեղարվեստականը, որին իրենց մասնակցությունն էին բերել ինչպես անհատ կատարողներ, այդ թվում՝ Մասիս Հունանյանը, այնպես էլ՝ «Հայարտուն» կենտրոնի «Տարոն» պարային, ՀՀ ազգագրական երգի-պարի «Նուբար», Ղզլքիլիսայի «Կարմրավանք» պարային, Նարդեւանի «Լուսաղբյուր» պարային համույթները:

***ՎԱՐՍԻԿ ՂՈՒԼԻԿՅԱՆ***
*Ծալկայի մունիցիպալիտետ*

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ԱՆԱՀԻՏ ԲՈՍՏԱՆՋՅԱՆԸ ԿԴԱՌՆԱՐ 68 ՏԱՐԵԿԱՆ

# ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԾՆՆԴՅԱՆԴ ՕՐՆ՝ ԱՌԱՆՑ ՔԵԶ...



Ծննդյանդ օրը՝ սեպտեմբերի 10-ը, միշտ տոնական հանդերձների ու հոգնության, թաքուն սպասելիքների մեջ էիր. Արդյոք քանի՞սը կհիշեն, քանի՞ հոգի կգան շնորհավորելու...

Հիմա քո առաջին ծննդյանդ օրն է՝ առանց քեզ. ո՞ւր գնանք, քո դատարկ բնակարա՞նը, ուր բուրում է չչորացած թանաքդ, ուր մշտական գեղարվեստական խառնաշփոթություն է՝ գրքե՜ր, «Վրաստան» թերթի տրցակներ, բառարաննե՜ր... էլի՜ գրքեր...

Ինչքա՜ն կյանքոտ էիր, ինչքա՜ն հախուռն, սիրելի Անահիտ, ամիսներ են անցել քո անժամանակ մեկնումից, բայց մազաչափ չի մեղմացել կորստիդ ցավը: Ինչքան լինում ենք տոների ու միջոցառումների, թվում է՝ ուրորէ բեմ կելնես ու կկարդաս հերթական քերթվածքդ՝ նվիրումով, հավատամքով ու սիրով... Կխոսես ոգորումով, համոզված ու հատու, րաբունու եւ վարժապետի պես, մոր եւ քրոջ հորդորով...

Ո՞վ է լրացնելու կիսատ թողածդ, ո՞վ է հասնելու հոգուդ թռիչքի հետեւից, ո՞վ՝ կանոնավորելու անկասելի ճախրանքդ...

Ծննդյանդ այս օրը, հիրավի, քո հոգին կառաջնորդի մեզ դեպի Հայոց Մեծաց Պանթեոն, ուր հանգչում է հոգուդ պատյանը՝ հպարտ ու անկոտրում կեցվածքդ, որ սիրառատ ու գթառատ մոր նման տուն ու ազգի հովանի էր, մշտավառ պահող Ատրուշան...

***«Վրաստան» թերթի խմբագրություն***
***Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միություն***

ԲՌՆՑՔԱՄԱՐՏ

# ՕԹԱՐ ԵՐԱՆՈՍՅԱՆԸ՝ ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԲՐՈՆԶԵ ՄԵԴԱԼԱԿԻՐ



Նախորդ համարում «Վրաստանը» տեղեկացրել էր, որ Գերմանիայի Համբուրգ քաղաքում կայացած բռնցքամարտի աշխարհի առաջնությունում երկիրը ներկայացնում էին Վրաստանի ազգային հավաքականի անդամներ, ախալքալաքցի Օթար Երանոսյանը եւ քութայիսցի Յագո Կիզիրիան (81կգ), որը պարտվեց հենց առաջին մենամարտում եւ դուրս մնաց հետագա պայքարից: Իսկ Օթարը 60կգ քաշային կարգում նվաճեց աշխարհի առաջնության բրոնզե մեդալը:

Ընթերցողին հիշեցնենք, որ աշխարհի առաջնությունում Օթար Երանոսյանը դեռ հաղթեց ղազախստանցի Ադիլետ Կուրմետովին, ապա՝ հնդիկ Շիվա Տապային: Քառորդ եզրափակիչ փուլում նա պարտության մատնեց ուզբեկ Էլնուր Աբդուրահիմովին: Կիսաեզրափակիչ փուլում Օ.Երանոսյանը հանդիպեց աշխարհի եռակի չեմպիոն, կուբացի Լասարո Ալվարեսին եւ պարտություն կրեց:

Հավելենք, որ, վերջին ութ տարվա ընթացքում, Վրաստանը բռնցքամարտի աշխարհի առաջնություններում մեդալ չի շահել:

Համբուրգից վերադառնալուց հետո, Օթար Երանոսյանին, նրա անձնական մարզիչ, Վրաստանի վաստակավոր մարզիչ Ատոմ Էլիզբարյանին, Վրաստանի բռնցքամարտի ֆեդերացիայի նախագահ Դավիթ Օիկլաուրուն ընդունեց Վրաստանի սպորտի եւ երիտասարդության հարցերով նախարար Տարիել Խեչիկաշվիլին եւ անձամբ շնորհավորեց մեծ հաղթանակի առիթով:

- Երջանիկ եմ, որ ուրախացրել եմ ամբողջ Վրաստանին, մարզասեր հասարակությանը, իմ Ախալքալաքիին եւ պատրաստ եմ է'լ ավելին անել մեր երկրի պատիվը բարձր պահելու համար,- հանդիպմանն ասաց Օթար Երանոսյանը:

- Համոզված եմ, որ Օթարը նույն խանդավառությամբ կկարողանա լինել աշխարհի լավագույն մարզիկներից մեկը, հետագայում՝ օլիմպիադայի լավագույն բռնցքամարտիկ: Օգտվելով առիթից՝ ուզում եմ հատուկ շնորհակալություն հայտնել նաեւ ֆեդերացիայի ղեկավարությանը, դպրոցին, Ախալքալաքիի ակումբին,- ասաց նախարար Տարիել Խեչիկաշվիլին:

***ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ***

ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆ

# ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ՝ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

*Վրաստանի կառավարությունն ընդունել է որոշում, ըստ որի, հազարավոր ավտոսեփականատերերին պարտադրվում է տեղադրել արագության սահմանափակման համար հատուկ սարքեր:*

Փոփոխությունն առնչվում է միկրոավտոբուսներին եւ ավտոբուսներին, ինչպես նաեւ բեռնատար ավտոմեքենաներին: Այդ մեքենաների շարժիչների վրա կտեղադրվեն հատուկ սարքեր, որոնք սահմանափակում են արագությունը մինչեւ սահմանված նշագիծը (100 եւ 90 կմ/ժամ): Այդ սարքերը ավտոմեքենաների մոտ մեխանիկորեն կսահմանափակեն նշագծից բարձր արագության բացումը: Վերոնշյալ սարքի համար վճարելու են իրենք՝ ավտոսեփականատերերը:

Կառավարության կողմից ընդունած փաստաթղթի համաձայն, ավելի քան ութ տեղ ունեցող ավտոբուսների եւ միկրոավտոբուսների սեփականատերերը տեղադրելու են այդ հատուկ սարքերը, որոնք մեխանիկորեն սահմանափակելու են այդ տրանսպորտային միջոցների առավելագույնը՝ մինչեւ 100կմ/ժամը:

Ինչպես հայտարարեցին կառավարությունում, վերոնշյալ փոփոխություններն առավել անվտանգ կդարձնեն ուղեւորների եւ բեռների փոխադրումները ողջ երկրի մասշտաբով:

Տեխնիկական կարգավորման համաձայն, վերոնշյալ կարգադրության կատարման պատասխանատվությունը դրվում է Վրաստանի ՆԳ նախարարության եւ երկրի էկոնոմիկայի նախարարության համակարգում գործող ցամաքային տրանսպորտի գործակալության վրա:




Նշենք, որ, վիճակագրության համաձայն, երկրում գրանցված են 53 հազար մարդատար եւ 100 հազար բեռնատար ավտոմեքենաներ:

***ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ***

ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱՆ ԸՆԴԱՌԱՋ

# ԻՆՉՊԵՍ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼ ԵՐԵԽԱՅԻՆ ՀԱՃԱԽԵԼՈՒ ԴՊՐՈՑ

*Մասնագիտական խորհուրդներ՝ ներկա եւ ապագա, սկսնակ եւ փորձառու ծնողներին:*



Խոսենք այն մասին, թե ինչպես նախապատրաստել երեխային հաճախելու դպրոց: Չնայած, որ այս հոդվածն ուղղված է մասնավորապես առաջին դասարան ընդունվող երեխաների ծնողներին, այնուամենայնիվ, դպրոցահասակ երեխա ունեցող բոլորն իրենց համար օգտակար խորհուրդներ կարող են քաղել:

***1. Մանկապարտեզ կամ այլ նախադպրոցական հաստատության սանը.***

Տարբեր երկրներում իրականացված հետազոտությունների համաձայն, մանկապարտեզ հաճախող երեխայի անցումը դպրոցական կյանք, շատ ավելի հեշտ է:

Մանկապարտեզ հաճախելով՝ երեխան սովորում է հարմարվել նոր միջավայրին, հասակակիցների հետ շփվելով՝ ձեռք բերում անհրաժեշտ սոցիալական հմտություններ, ինչպես նաեւ սովորում «բաժանվել» ծնողից: Եթե ինչ-ինչ պատճառներով ձեր երեխան մանկապարտեզ չի հաճախել, ապա, նպատակահարմար է, որ երեխան որեւէ քոլեջ կամ խմբակ հաճախի, որտեղ գոնե 1-2 ժամով բաժանվի ծնողից: Երբեմն ծնողի համար էլ է հոգեբանորեն դժվար լինում երեխային նոր եւ օտար միջավայրում մենակ թողնել, սակայն, որքան շուտ դրան վարժվեք՝ այնքան լավ:

***2. Ծանոթություն դպրոցին եւ դպրոցական կյանքին***

Նախքան ուսումնական տարվա սկիզբը՝ այցելե'ք երեխայի հետ այն դպրոցը, որտեղ նա պետք է սովորի: Ցո'ւյց տվեք նրան իր ապագա դպրոցի շենքը, դասասենյակը, դասամիջոցների անցկացման վայրը: Պատմե'ք դպրոցական կյանքի մանրամասները հենց տեղում, ինչպես նաեւ տարբեր առիթներով՝ տանը: Եթե դուք սովորել եք ոչ այլ դպրոցում, տարե'ք նրան նաեւ ձեր դպրոցը (ցանկալի է 2 ծնողների դպրոց այցելությունը եւ այդ ընթացքում 2 ծնողների ներկայությունը), ծանոթացրե'ք ձեր ուսուցիչների, հատկապես նրանց հետ, ում հետ ջերմ հարաբերություններ եք ունեցել:

***3. Դպրոցը՝ որպես երջանկության աղբյուր***

Մեր հասարակության մեջ ամրացած եւ կարծրացած մի մոտեցում կա, որի համաձայն՝ դպրոցը միայն գիտելիք ստանալու համար է: Թե' ծնողներից, թե' ուսուցիչներից շատերը շեշտը դնում են գիտելիքի վրա: Սակայն ոչ պակաս, թերեւս նույնիսկ առավել կարեւոր են ոչ թե դպրոցում ձեռք բերված գիտելիքները, այլ այն հարաբերությունները, որոնք երեխան ձեւավորում է դպրոցական տարիքում: Դպրոցը միջավայր է, որտեղ ձեւավորվում է երեխայի հուզական աշխարհը: Բացատրե'ք երեխային, թե որքան լավ է դպրոցում, որովհետեւ նոր ընկերներ ձեռք կբերի նաեւ: Խոսե'ք նրա հետ հույզերի ու զգացմունքների մասին: Պատմե'ք, թե դուք ինչ էիք զգում, երբ առաջին անգամ դպրոց գնացիք: Նախապատրաստե'ք երեխային այն ապրումների համար, որոնք նա կարող է ունենալ՝ շեշտը դնելով հիմնականում դրականի վրա՝ հուզմունք, ուրախություն, հիացմունք, ոգեւորություն եւ այլն: Սակայն, նշե'ք նաեւ, որ հնարավոր է՝ երեխան ունենա վախի, անորոշության կամ այլ բացասական զգացողություններ, եւ որ դրանք նորմալ են, եւ այդ պահին պետք է խորը շունչ քաշել ու կենտրոնանալ կարեւորի վրա: Անհրաժեշտ է կարեւորել ոչ միայն այն, որ երեխան նոր գիտելիք ձեռք բերի, այլեւ այն, որ կունենա նոր ընկերներ, նոր ծանոթություններ, նոր ուսուցիչներ եւ այլն: Դրական սոցիալական հարաբերությունները շատ դեպքերում ավելի նպաստավոր ազդեցություն են ունենում մարդու հետագա կյանքի վրա, քան ձեռք բերված գիտելիքները:

***4. Գիրք կարդալ՝ ոչ միայն երեխայի համար***

Երեխայի ուսմանը նպաստելու ամենալավ միջոցն օրինակ ծառայելն է: Ձեր երեխայի մեջ ընթերցանության նկատմամբ սեր արթնացնելու միջոցը գիրք կարդալն է: Օրվա մեջ հատկացրե'ք մեկ ժամ՝ գիրք կարդալու երեխայի համար: Ընթերցանությունն ավարտե'ք ամենահետաքրքիր տեղում, եւ շարունակությունը թողե'ք հաջորդ օրվան: Ոչ պակաս կարեւոր է, որպեսզի երեխան ընտանիքի բոլոր անդամներին պարբերաբար տեսնի գիրք կարդալիս: Շատ հաճախ աշխատանքից հոգնած տուն գալով՝ միացնում եք հեռուստացույցը կամ, հատկապես մայրիկները, զբաղվում են տան գործերով: Սակայն, շատ կարեւոր է հիշել, որ ձեր երեխան ձեզ չի տեսնում աշխատավայրում, հետեւաբար, ձեր վարքի մասին հետեւություններ է անում միայն ձեր տանը եղած ժամանակ: Այդ պատճառով անհրաժեշտ է ընթերցանության մշակույթի ամրապնդումն ընտանիքում:

Գրի եւ գրականության հանդեպ ձեր երեխայից սեր եւ ցանկություն կարող եք պահանջել միայն այն դեպքում, երբ ինքներդ էլ դրան ուշադրություն ու ժամանակ եք տրամադրում:

Եվ վերջում՝ անդրադառնանք երեխային հարկադրաբար տառեր, թվեր, կարդալ, գրել սովորեցնելուն, լինի դա տանը, թե մանկապարտեզում: Ուսումնական գործընթացում ամենակարեւոր տարրերից մեկը նոր բան սովորելու գործընթացում երեխայի մեջ դրական հույզի արթնացումն է: Եթե երեխան այդ ամենն արդեն գիտի, ապա ուսումն առաջին դասարանում նրա համար ոչ միայն կրկնություն, այլեւ ձանձրույթ է դառնում: Երեխային վաղօրոք եւ հարկադրաբար կրթելը խոչընդոտում է ուսման հանդեպ նրա հետաքրքրվածությանը եւ սիրուն:



# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՏՈՆԱԿԱՆՈՐԵՆ ՆՇՎԵՑ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՄԱՆ 26-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ



*Սեպտեմբերի 2-ին, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը Արցախի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտում մասնակցեց Արցախի Հանրապետության հռչակման 26-րդ տարեդարձին նվիրված տոնական միջոցառումներին:*

Սերժ Սարգսյանը, Արցախի նախագահ Բակո Սահակյանի, արցախահայության եւ տոնակատարությանը մասնակցելու նպատակով, Հայաստանից ժամանած պաշտոնական պատվիրակության ու արտերկրից ժամանած հյուրերի հետ Վերածննդի հրապարակից հանդիսավոր քայլերթով շարժվեց դեպի Ստեփանակերտի հուշահամալիր, ծաղկեպսակ դրեց եւ հարգանքի տուրք մատուցեց Արցախի անկախության համար զոհված հայորդիների հիշատակին:

Նույն օրվա երեկոյան Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը, տոնի կապակցությամբ, Ստեփանակերտ ժամանած հյուրերը, մասնակցեցին Ստեփանակերտում կազմակերպված տոնական ընդունելությանը, այնուհետեւ Վերածննդի հրապարակում` անկախության հռչակման տարեդարձին նվիրված տոնական համերգին:

## ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ` ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

*Սեպտեմբերի 4-ին, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում ունեցավ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) նախագահ Սումա Չակրաբարտիի գլխավորած պատվիրակության հետ:*



Հանդիպմանը` Հայաստանի նախագահը բարձր գնահատեց ՎԶԵԲ-ի հետ Հայաստանի երկարամյա արդյունավետ համագործակցությունը, որը, նրա գնահատմամբ, անցած ավելի քան երկու տասնամյակում անփոխարինելի աջակցություն է ցուցաբերել Հայաստանի տնտեսության զարգացմանն ու բարեփոխումների իրականացմանը: Զրուցակիցները համակարծիք էին, որ Հայաստանի եւ ՎԶԵԲ-ի միջեւ համագործակցությունը ռազմավարական բնույթ է կրում եւ փոխադարձաբար շնորհավորեցին միմյանց` ՎԶԵԲ-ին Հայաստանի անդամակցության 25-ամյակի առիթով:

Հանդիպման մասնակիցները երկուստեք նշեցին, որ Հայաստանի եւ ՎԶԵԲ-ի քառորդդարյա արդյունավետ փոխգործակցությունն այսուհետ եւս կշարունակվի նույն հաջողությամբ զարգանալ, եւ բանկի նախագահ Սումա Չակրաբարտիի այցը նոր լիցք կհաղորդի երկկողմ հարաբերություններին:

Սումա Չակրաբարտին վերահաստատեց ՎԶԵԲ պատրաստակամությունը` շարունակելու աջակցությունը Հայաստանին, ընդգծելով, որ երկրի տնտեսական քաղաքականությունն ու իրականացվող բարեփոխումները համահունչ են բանկի ծրագրերին: Նա գոհունակությամբ փաստեց, որ գործընկերությունը տարեցտարի ընդլայնվում եւ ամրապնդվում է` ընդգրկելով տնտեսության տարբեր ոլորտներ:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց Հայաստանի հետ ՎԶԵԲ-ի համագործակցության առաջիկա ծրագրերին, Հայաստանի առաջնահերթություններին, տնտեսության զարգացման ներուժին եւ հեռանկարին:

## ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՎԵԼ Է ԱՎԵԼԻ ՔԱՆ 1,5 ՄԻԼԻԱՐԴ ԴՐԱՄ ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐ



*Բնակարանի ձեռքբերման կամ անհատական բնակելի տան կառուցապատման նպատակով` 2017թ. հունվարից մինչեւ այսօր Պետական եկամուտների կոմիտեն ֆիզիկական անձանց վերադարձրել է ավելի քան 1,5 մլրդ դրամ եկամտային հարկի գումար:*

Պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվությամբ, Հայաստանի պետական բյուջեից հիպոթեքային վարկի տոկոսների մարմանն ուղղվող եկամտային հարկի գումարները տարեցտարի աճում են: 2016թ. համադրելի ժամանակահատվածում ֆիզիկական անձանց վերադարձվել է շուրջ 900 մլն դրամ գումար: Պետբյուջեից վերադարձվող եկամտային հարկի գումարի աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, կազմել է մոտ 70 տոկոս: Ի դեպ, աստիճանաբար աճում է նաեւ օրենքի ընձեռած հնարավորություններից օգտվող անձանց թիվը:

2014թ. նոյեմբերին «Եկամտային հարկի մասին» Հայաստանի օրենքը լրացվել է 8.2 հոդվածով, համաձայն որի` ֆիզիկական անձանց կողմից վճարված եկամտային հարկը հետ է վերադարձվում բնակելի շենքում անմիջապես կառուցապատողից կամ պետությունից բնակարանի ձեռք բերման կամ անհատական բնակելի տան կառուցման նպատակով ստացված եւ փաստացի բնակարանի ձեռք բերմանն ուղղված հիպոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների չափով: Գործընթացի մեկնարկից մինչեւ այսօր ՀՀ պետական բյուջեից վերադարձվել է 3,2 մլրդ դրամի չափով եկամտային հարկի գումար:

## ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԱԴՐԲԵՋԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ



***Սեպտեմբերի 8-ին, Մոսկվայում, կայացավ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի, Ադրբեջանի հոգեւոր առաջնորդ, Կովկասի մահմեդականների վարչության ղեկավար Ալահշուքյուր Փաշազադեի եւ Համայն Ռուսիո պատրիարք Կիրիլի հանդիպումը: Հանդիպման ընթացքում քննարկվել են ղարաբաղյան հակամարտությանն ու տարածաշրջանային խաղաղությանն առնչվող հարցեր: Կողմերը կոչ են արել արել ազատ արձակել որպես ռազմագերիներ պահվող քաղաքացիական անձանց, ինչպես նաեւ դիմել են կողմերին` կանխելու եկեղեցիների եւ մզկիթների հանդեպ վանդալիզմի դրսեւորումները:***

## ԻՋԵՎԱՆԸ` ՀԱՅԱՍՏԱՆԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

***Հայաստանի սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարությունում տեղի ունեցավ 2018 թվականի «ՀՀ տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի արդյունքների ամփոփումը: Մրցույթին ներկայացվել էին Գեղարքունիքի մարզի Գավառ, Տավուշի մարզի Իջեւան եւ Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքները: Համաձայն մրցույթի կանոնակարգի, բոլորի ներկայությամբ, ամփոփվեցին հայտերի sms քվեարկության եւ փորձագիտական գնահատման արդյունքները, որոնց համադրմամբ ամենաբարձր միավորներ ստացած Իջեւան քաղաքը ճանաչվեց մրցույթի հաղթող եւ հռչակվեց 2018թ. ՀՀ երիտասարդական մայրաքաղաք:***

## ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(1 սեպտեմբերի)

***Հայաստանի Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի փոխանակման հետեւյալ կուրսը.***

| ՏԱՐԱԴՐԱՄ | ԱՌՔ | ՎԱՃԱՌՔ |
|---|---|---|
| ԱՄՆ ԴՈԼԱՐ | 477,00 | 479,50 |
| ԵՎՐՈ | 573,00 | 580,00 |
| ՌՈՒԲԼԻ | 8,34 | 8,49 |

***Օգոստոսի 25-ի համեմատ, ԱՄՆ դոլարի կուրսը նվազել է 0,2 դրամով:***

## «ՎԵՑԵՐՈՐԴ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ` ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԵԾ ՀԱՐԹԱԿ»

*Հայաստան-Սփյուռք վեցերորդ համահայկական համաժողովը լինելու է քաղաքական, տնտեսական, ազգային եւ փորձի փոխանակման մեծ հարթակ: Այդ մասին լրագրողների հետ հանդիպմանը հայտարարել է Հայաստանի Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը:*

Նրա խոսքով, Երեւանում սեպտեմբերի 18-20-ը կայանալիք «Փոխադարձ վստահություն, միասնականություն եւ պատասխանատվություն» Հայաստան-Սփյուռք վեցերորդ համահայկական համաժողովը ի մի է բերելու եւ ամփոփելու է Հայաստան-Սփյուռք գործակցության ներկա արդյունքները եւ ապագային միտված անելիքները:

- Համաժողովին իրենց մասնակցությունն են հաստատել ավելի քան 1500 մարդ աշխարհի 70 երկրից: Հատկանշականն այն է, որ համաժողովին առաջին անգամ են մասնակցելու մոտ 20 հեռավոր երկրներից, ինչպիսիք են Չինաստանը, Սինգապուրը, Սուդանը, Եթովպիան, Թայլանդը եւ այլն,- ասաց Հակոբյանը:

Նախարարը նշեց, որ համաժողովի ընթացքում տեղի կունենան 3 լիագումար նիստեր, ինչպես նաեւ 4 ուղղություններով նախատեսված 16 թեմատիկ նիստեր, որոնք վերաբերում են Հայաստանի տնտեսության զարգացմանը, տարածաշրջանային մարտահրավերներին եւ ազգային անվտանգության օրակարգին, արտաքին քաղաքականության օրակարգին եւ Հայոց ցեղասպանության հետեւանքների վերացմանն ու հայապահպանության հիմնախնդիրներին:

- Առաջին լիագումար նիստում ելույթ կունենան Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը, Հայաստանի Հանրապետության նախագահը, Արցախի Հանրապետության նախագահը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ն: Համաժողովի երկրորդ օրվա լիագումար նիստում հանդես կգա վարչապետ Կարեն Կարապետյանը, կքննարկվեն տնտեսական քաղաքականության հետ կապված հարցեր: Իսկ համաժողովի աշխատանքների ամփոփիչ նիստում ելույթ կունենա Ազգային ժողովի նախագահ Արա Բաբլոյանը,- ասաց Հակոբյանը:

Նախարարը նշեց, որ համաժողովի ընթացքում կներկայացվեն նախորդ` 5-րդ համահայկական համաժողովի առաջարկների արդյունքում ձեւավորված ծրագրերի իրագործման ուղղությամբ կատարված աշխատանքները, ի մի կբերվեն բոլոր նոր առաջարկները, որոնք հետագայում կվերածվեն ծրագրերի եւ կյանքի կկոչվեն:

- Համաժողովում առաջին անգամ անցկացվելու է երկու կլոր-սեղան: Առաջին կլոր-սեղանին քննարկման կդրվեն աշխատանքային խմբի առաջարկները Համահայկական խորհրդի ձեւավորման սկզբունքների վերաբերյալ: Երկրորդ կլոր-սեղան քննարկումը նվիրվելու է Հայաստանի Հանրապետության հռչակման եւ Մայիսյան հերոսամարտերի 100-ամյակի, ինչպես նաեւ Էրեբունի-Երեւանի 2800-ամյակի տոնակատարությունների կազմակերպման եւ անցկացման նախնական ծրագրերին,- ընդգծեց Հակոբյանը:

Նախարարի խոսքով, համագումարի շրջանակում ձեւավորվելու են տաղավարներ, որոնցում իրենց նվաճումները կներկայացնեն այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են «Թումո» նորարարական տեխնոլոգիաների կենտրոնը, «Այբ» նորարարական դպրոցը, «Քվանտ» վարժարանը:

Նախարարը տեղեկացրեց նաեւ, որ համաժողովի շրջանակում կկազմակերպվեն մի շարք մշակութային միջոցառումներ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՍԵՊՏԵՄԲԵՐ

***9.09.2017 Նիկիայի Սուրբ ժողովի 318 Հայրապետների հիշատակության օր***



Քրիստոսի եկեղեցու պատմության մեջ առաջին Տիեզերական ժողովը տեղի է ունեցել 325 թվականին, Կոստանդիանոս Մեծ կայսեր հրամանով, Կ.Պոլսի մոտ գտնվող Նիկիա քաղաքում: Տիեզերաժողովին մասնակցում էր նաեւ Սուրբ Գրիգոր Լուսավորչի որդին՝ Արիստակեսը: Ժողովի ընդունած դավանաբանական բանաձեւը, որը հայտնի է Նիկիական հանգանակ անունով, Սբ. Արիստակես Հայրապետը Հայաստան է բերել, ներկայացրել հորը՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչին: Վերջինս էլ դրան ավելացրել է «Իսկ մեք փառաւորեսցուք... » հատվածը: Նիկիայում ընդունված Հավատո հանգանակն ու Լուսավորչի ավելացրած հատվածը մինչեւ այսօր էլ անփոփոխ օգտագործում են Հայ եկեղեցու ծիսակարգում: Արիստակեսն իր հետ Հայաստան էր բերել նաեւ Նիկիայի ժողովում ընդունած 20 կանոնները, որոնք նույնպես հաստատվել են Սուրբ Գրիգոր Լուսավորչի կողմից:

***10.09.2017 Բարեկենդան Սուրբ Խաչի պահոց***

Բարեկենդանը պահքին նախորդող կիրակին է, որը նվիրված է տաղավար տոներից մեկին՝ Խաչվերացին եւ տեւում է երկուշաբթիից մինչեւ շաբաթ:

ՎԱՐԿԱՆԻՇ

# ՎՐԱՍՏԱՆՆ ԱՌԱՋ ԱՆՑԱՎ ՀԻՆ ՀՌՈՄԻՑ, ՀՆԴԿԱՍՏԱՆԻՑ, ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ...

***Ամերիկյան TheTopTens կայքէջը անցկացրեց հարցում, որի ընթացքում կայքից օգտվողները պետք է առանձնացնեին լավագույն եւ միաժամանակ հնագույն քաղաքակրթությունները: Գնահատումների համաձայն, Վրաստանն այդ պատվավոր վարկանիշում զբաղեցրել է երրորդ տեղը:***



Վարկանիշի համաձայն՝ Վրաստանը զիջում է միայն Հունաստանին եւ Եգիպտոսին: Հնագույն քաղաքակրթությունների չորրորդ եւ դրան հաջորդող վարկանիշի դիրքերում են Հին Հռոմը, Չինաստանը, Հնդկաստանը, Պարսկաստանը, Ացտեկների կայսրությունը եւ հին Սպարտան: Վարկանիշի վերջին դիրքերում են Կելտերը, Միջնադարյան Անգլիան եւ Եթովպիան:

Վարկանիշը ձեւավորվել է հին քաղաքակրթությունը բնորոշող չափորոշիչներով եւ կայքէջից օգտվողներին տրվել է իրենց կարծիքը մեկնաբանություններով ներկայացնելու հնարավորություն: Տրվել է նաեւ հնարավորություն՝ հիմնավորելու, թե ինչու այս կամ այն երկիրը, իրենց կարծիքով, պատկանում է հնագույն քաղաքակրթությանը:

Ավելի քան 300 մեկնաբանություններում Վրաստանը ներկայացվել է որպես ավանդույթներով երկիր, իր բարյացակամ բնակչությամբ, վրացական բազմաձայն երգով ու պարերով: Իրենց արձագանքներում կայքից օգտվողները երկիրն անվանել են խաղողի հայրենիք, մեջբերումներ արել Ոսկե գեղմի ու Պրոմեթեւսի առասպելներից: Նշվել է նաեւ, որ հենց Վրաստանում են հայտնաբերվել հնագույն հոմինեդների մնացորդները, իսկ վրաց լեզուն ներառված է աշխարհի հնագույն տասը լեզուների ցուցակում:

ՆՈՐ ՕԲՅԵԿՏ

# ՍՈՒՐՃԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԹԲԻԼԻՍԻԻ ՄՈՏԱԿԱՅՔՈՒՄ

***«Կապսուլ» ՍՊԸ-ն Թբիլիսիի մոտակայքում Կախեթիի խճուղու վրա սուրճի գործարանի սկսած շինարարությունը, ենթադրաբար, կավարտվի տարեվերջին:***

Ինչպես նշեց գործարանի ղեկավար Բեժան Գուրգենիձեն, շինարարությունը ծրագրված էր ավարտել հոկտեմբերի վերջին, թեպետ, տեխնիկական պատճառներով, այդ ժամկետը հետաձգվեց: «Ստիպված էինք օգտագործել բարդ կոնստրուկցիաներ, այդ պատճառով էլ շինարարությունը ձգձգվեց, թեպետ այն երբեք չի ընդհատվել»,- ընդգծեց Գուրգենիձեն:

Առաջին անգամ Վրաստանում «Կապսուլ» ՍՊԸ-ն սկսում է սուրճի արտադրություն: «Մենք անցկացրինք աշխատակիցների վարժանքներ, եւ որակավորումը բարձրացնելու նպատակով, նրանց պարբերաբար գործուղում ենք Իսպանիա, Իտալիա, Գերմանիա»,- հայտարարեց Բեժան Գուրգենիձեն: Նա սկզբնական փուլում խուսափեց սուրճի անվանումների, գների եւ այլ մանրամասների մասին խոսակցությունից, նշելով, որ այդ ամենը, ինչպես նաեւ սուրճի ճանաչված կազմակերպությունների համագործակցության հարցերը, մշակման փուլում են:

Գուրգենիձեի խոսքով, նախագծի արժեքը կազմում է մոտավորապես 12 միլիոն լարի, թեպետ, նոր նախագծի գործարկման պայմաններում, բացառված չէ, որ այդ գումարը գերազանցի 20 միլիոնի նշանագիծը:

ՖՈՒՏԲՈԼԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԼ

# ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆՆԵՐԻՆ ԵԶՐԱՓԱԿԻՉՈՒՄ ԿՐԿԻՆ ՉԵՆՔ ՏԵՍՆԻ




Ֆուտբոլի աշխարհի առաջնության ընտրական փուլի D խմբում հանդես եկող Վրաստանի հավաքականը, վերջին երկու հանդիպումներն ավարտեց միեւնույն հաշվով՝ 1:1: Արդյունքները գրանցվեցին Վրաստան-Իռլանդիա եւ Ավստիրիա-Վրաստան հանդիպումներով: Այսպիսով, Վրաստանի թիմը 8 հանդիպումներում վաստակելով 5 միավոր, փաստորեն կորցրեց առաջնության եզրափակիչի ուղեգիր նվաճելու իր հնարավորությունը: Երկրի ընտրանին հաջորդ հանդիպումը կանցկացնի սեփական հարկի տակ՝ հոկտեմբերի 6-ին Ուելսի հավաքականի հետ, իսկ հոկտեմբերի 9-ին ուժերը կփորձի Սերբիայի հավաքականի հետ մրցակցի դաշտում:

Առաջնության ուղեգիրը նվաճելու տեսական հնարավորությունն էլ կորցրեց E խմբում հանդես եկող Հայաստանի հավաքականը: Հայաստանի ընտրանին վերջին երկու հանդիպումներում՝ սեփական հարկի տակ՝ 1:4 հաշվով զիջեց Դանիայի հավաքականին, իսկ երկու օր անց՝ 0:1 հաշվով մրցակցի դաշտում զիջեց Ռումինիայի թիմին: Հայաստանի հավաքականը 8 հանդիպումից հետո՝ 6 միավորով զբաղեցնում է նախավերջին տեղը:

Հաջորդ հանդիպումը Հայաստանի հավաքականը կանցկանցի հոկտեմբերի 5-ին՝ իր տանիքի տակ հյուրընկալելով Լեհաստանին:

# ԽԱՉԲԱՌ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 4.Ղազախստանի մայրաքաղաքը: 8.Չհամաձայնել, խոսքերով հերքել: 9.Գերմանացի փիլիսոփա, ուղղափառ սխոլաստիկայի ներկայացուցիչ ... ֆոն Բոլշտեդտ: 10.Բույսերի ու կենդանիների տեղական տեսակներ, որոնք տարածված են աշխարհագրական համեմատաբար ոչ մեծ տարածքում՝ մայրցամաքում, կղզիներում, լեռներում եւ ոչ մի այլ վայրում չեն հանդիպում: 14.Պայթուցիկ նյութ: 15.Վրացի մարզական լրագրող եւ մեկնաբան ... Օբոլաձե: 17.Պատահմունք, դեպք: 18.Որեւէ թեմային վերաբերող: 22.Քաղաքատիպ ավան Վրաստանի Խաշուրիի շրջանում: 23.Դելֆինների տեսակ: 26.Թերեւս, երեւի: 27.Աբխազիայում արտադրած: 32.Ռուս մարմնամարզիկ, հասարակական եւ քաղաքական գործիչ ... Կաբաեւա: 33.Համայնք ՀՀ Շիրակի մարզում: 35.Ուկրաինայի մայրաքաղաքը: 36.... ցնդել, չքվել: 39.Սատուրնի արբանյակն է, հայտնաբերվել է Ուիլիամ Հերշելի կողմից 1789 թվականին: 41.Հատուկ սահմանափակիչով սկյութական երկար դաշույն: 42.Վեհ, փառահեղ: 44.Հարավային Կորեայի մայրաքաղաքը: 45.Սնոտի, փուչ, դատարկ: 46.Մի շարք երկրներում դրամական միավոր: 47.Անուն չունեցող: 48.Երկրաչափական մարմին: 49.Մեղվինը՝ բուժիչ, օձինը՝ մահացու: 50.Առանց ճտքի, երեսը կիսով բաց կոշիկ, ոտնաման: 51.Կարմրագորշ շերտ՝ երկաթի մակերեսին, որ առաջանում է օքսիդանալուց:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Որեւէ բան անելու ներքին ձգտում: 2.Հունա-հռոմեական ոճի ըմբշամարտիկ ... Ջուլֆալակյան: 3.Ժողովրդական բժիշկ: 5.Ջամբյուղ, կողով (գվռ.): 6.Փոքր եղբայր: 7.Աշխարհի եւ մարդկության արարիչը: 11.Գերմանացի երաժիշտ ... Բոլեն: 12.Ֆրանսիացի տիկին: 13.Ե՛վ թռչուն, ե՛ւ «Չինական ակտինիդիա» (միրգ): 15.Էպիզոդ, կադր: 16.Կյանքը ռիսկի ենթարկած, ... կախված: 18.Հողաբլուր: 19.Թաջ-...: 20.Հայ Արշակունի թագավոր: 21.Թեոդոսիան հնում: 24.Լորա տախտականկար, որ առանձնանում է կերպարների դյուրըմբռնելիությամբ եւ նախատեսված է մասսայական արածման համար: 25.Վերեւ (հակ.): 28.Հոգեկան տանջալից ապրում: 29.Խորհրդային ավտոմեքենա: 30.ՀՀ Տաշիր քաղաքի նախկին անվանումը: 31.Գրավոր ուղերձ: 34.Հռոմեացի քաղաքագետ եւ փիլիսոփա: 37.Քաղաք Սեւ ծովի ափին (Ուկրաինա): 38.Աղցան: 39.Հայ բանաստեղծ, Ֆրանսիայի ազգային հերոս ... Մանուշյան: 40.Արցախի պետական համալսարանի ռեկտոր ... Մինասյան: 42.Իտալացի կինոռեժիսոր եւ կինոդերասան Վիտորիո դե ...: 43.Մարդու գլխի կմախքը:

*Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ*

## ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Թվական: 4.Ալազանի: 10.Քաթան: 11.Տաս: 12.Ղափամա: 13.Արա: 14.Աղա: 15.Անիվ: 16.Կահ: 17.Օթար: 18.Աթարա: 19.Թառ: 22.Խսիր: 23.ՄԱԿ: 24.Ռուս: 26.Դեր: 27.Տղա: 29.Աբաս: 31.Տրե: 35.Կերպ: 36.Քնար: 37.Կախի: 39.Նկար: 40.Աբու: 41.Աի: 42.Ծուխ: 43.Սաքո: 45.Ավանս: 47.Նախ: 49.Գանա: 50.Սինա: 51.Անագ: 53.Նար: 54.Սարփի: 55.Մակու: 57.Արդուկ: 59.Սալբի: 60.Փանոս:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Թաղանթ: 2.Արփի: 3.Ալմաթի: 4.Աթանես: 5.Լարի: 6.Անավարտ: 7.Ատակամա: 8.Նաղարա: 9.Իսահակ: 20.Առակ: 21.Ռուբեն: 22.Խրտնած: 25.Սարկավագ: 28.Ղուկաս: 30.Սպահան: 32.Րաբունի: 33.Երուխան: 34.Փիրոսմանի: 38.Փայլան: 44.Արագած: 45.Ագարա: 46.Նառա: 48.Խաղաղ: 50.Սոփիկո: 52.Նամուս: 54.Սուրբ: 56.Կալ: 58.Դի:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աքոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445